

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ՈՐՊԵՍ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի հայրորդ

Միգրացիան՝ մարդկանց զանգվածա-
յին տեղափոխությունը, ժամանա-
կակից աշխարհում իր բնույթով
դուրս է գալիս առանձին պետությունների
հոգածության ոլորտից և մտահոգում է ամ-
բողջ աշխարհին: Ինչպես իրավացիորեն
նշում է Լ. Կոստինը, մարդկության պատ-
մությունը մեծամասամբ նաև միգրացիայի
պատմությունն է, երբ մարդիկ տեղաշարժ-
վում են մի վայրից մյուսը կյանքի և աշխա-
տանքի ավելի լավ պայմաններ գտնելու
հույսով: Գիտատեխնիկական առաջընթա-
ցին և հետզհետե զարգացող հասարակա-
կան հարաբերություններին զուգընթաց՝
կրճատվում է ծնելիության գործակիցը², և
աճում է միգրացիոն հոսքերի քանակը. օ-
րինակ՝ ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝
2025թ. Եվրամիությանը իր աշխատաշու-
կայի կարիքները լրացնելու համար անհ-
րաժեշտ կլինի 40 միլիոն միգրանտ աշխա-
տող³:

Գիտատեխնիկական առաջընթացի և
գլոբալիզացիայի պայմաններում այսօր
աշխարհի բնակչության 2 տոկոսը՝ մոտ
140 միլիոն մարդ, ապրում է ոչ այն երկ-
րում, որտեղ ծնվել է⁴:

Դասական առումով նոր պատմական
ժամանակաշրջանում առանձնացվում է
միգրացիոն երևույթներ ծնող երկու հիմնա-
կան խումբ գործոններ՝ քաղաքական և
տնտեսական՝ աշխատանքային:

Միգրացիոն գործընթացների վերլու-
ծության առաջին լուրջ փորձերն արել է Է.
Ռավենստայնը դեռևս 1880 ական թթ., որը
համարվում է միգրացիայի տեսական հե-
տազոտությունների նախահայրը: 1885-
1889 թթ. Լոնդոնում լույս ընծայվեց նրա

«Միգրացիայի օրենքները» և «Միգրացիա-
յի տեսությունները» աշխատությունները,
որոնցում սահմանված էին և՛ միգրացիայի
շարժառիթները, և՛ միևնույն ժամանակ
միգրացիայի օրինաչափությունները: Նրա
տեսակետները արդիական են նաև այսօր:
Է. Ռավենստայնը առաջիններից էր, ով ի-
րավացիորեն նշեց, որ միգրացիայի հիմ-
նական գործոնը տնտեսական է, և որ մար-
դիկ ամենից առաջ ծագում են առևտրի և
արդյունաբերության կենտրոններ հանդի-
սացող մեծ քաղաքներ⁵:

Միգրացիայի վրա ազդում է նաև քաղա-
քական գործոնը, երբ մարդիկ այլ երկրում
մշտական բնակություն են հաստատում ի-
րենց քաղաքական հայացքերի համար,
քանի որ իրենց երկրում ենթարկվում են
հալածանքների կամ դեմ են պետական
քաղաքականությանը: Բոլոր դեպքերում
քաղաքական գործոնը սովորաբար հան-
գեցնում է ոչ թե միգրանտների, այլ փախս-
տականների ինստիտուտի առկայությանը,
որոնք, ի տարբերություն առաջինների,
ընդմիշտ կտրում են իրենց կապը քաղա-
քացիության երկրի հետ և փակում հայրե-
նիք հետդարձի ուղին, այնինչ տնտեսա-
կան գործոնի առկայության դեպքում միգ-
րանտները գաղթում են այլ երկիր իրենց
կենսապայմանների մակարդակը բարձ-
րացնելու նպատակով, և շատ հաճախ ոչ
միայն չեն կտրում կապը քաղաքացիու-
թյան երկրի հետ, այլ երբեմն ինչ-որ գումար
կուտակելուց հետո նաև վերադառնում են:
Այնուամենայնիվ, անգամ քաղաքական
նպատակներով իրենց երկիրը ընդմիշտ
լքած անձինք, միևնույնն է, սկսում են աշ-
խատել և ի վերջո վերածվում են աշխա-
տանքային միգրանտների:

Իր ծավալներով հենց տնտեսական
կամ աշխատանքային միգրացիան է հա-
մարվում միգրացիայի հիմնական եղանա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

կը, այս առումով մենք լիովին համակարծիք ենք Գ. և Դ. Սվանիձենների հետ, որ միգրացիայի հիմնական պատճառը գործազրկությունն է⁶:

Ընդ որում, հենց աշխատանքային միգրանտների քանակն է գնալով աճում՝ իր ազդեցությունը թողնելով թե՛ միգրանտին ընդունող և թե՛ միգրանտի ծննդավայր երկրի տնտեսության վրա: Օրինակ՝ ՌԴ-ում միգրանտ աշխատողների թիվը 2007թ. հասել էր 2.3 միլիոն մարդու, որը երեք անգամ ավելի էր միգրանտների քանակից 2005թ-ի և 17 անգամ ավելի 1994թ. համեմատ⁷: Հայաստանի Հանրապետության դեպքում մասնավորապես տվյալներ չեն մշակվում ոչ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ոչ էլ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կողմից: Բոլոր դեպքերում վերջին տարիների ընթացքում էապես աճել է Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրացիների քանակը: Դա ակներև է հետևյալ տվյալներից. 2000թ.՝ ժամանել է 800740 մարդ, 2001թ.՝ 1.016.422, 2002թ.՝ 1.181.308, 2003թ.՝ 1.236.696, 2004թ.՝ 1.479.772, 2005թ.՝ 1.691.688, 2006թ.՝ 1.967.482, 2007թ.՝ 2.587.118, 2008թ.՝ 2.128.938, 2009թ.՝ 2.574.866:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ տվյալներից⁸, վերջին տասը տարիների ընթացքում Հայաստան ժամանած անձանց քանակն ավելացել է ավելի քան երեք անգամ: Ամենայն հավանականությամբ աճել է Հայաստան ժամանած օտարերկրացիների քանակը և հետևաբար միգրանտ աշխատողների քանակը: Օրինակ՝ միայն «Գաֆեճեան թանգարան» հիմնադրամում, որը խոշոր գործատու չէ, 2008թ. դրությամբ աշխատում էր ավելի քան 6 միգրանտ պարսիկ, ամերիկացի, ռուս և անգամ եգիպտացի: «Լոնդոն-Երևան» Կօ ապահովագրական ընկերությունում 2009թ. դրությամբ

աշխատում է ՌԴ կին քաղաքացի, որը ՀՀ իրավական կարգավորման պայմաններում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիների, հնարավորություն չի ունեցել օգտվելու հղիության և ծննդաբերության վճարովի արձակուրդի իր իրավունքից, քանի որ օտարերկրացուն սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ-ում չեն տրվում: «Դեյվիդ Հոթսոն Ասոսիեթս Արքիթեթս» ՓԲ ընկերությունում 2007-2008 թթ. մոտ 30 աշխատողներից 3-ը օտարերկրացի էր, այսինքն՝ 10 տոկոսը:

Վերջերս ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային օրենսդրության նպատակներից է համարել նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները (հոդված 2)⁹ դրանով իսկ, կարծում ենք, կարևորելով միգրանտ աշխատողների իրավունքները կանոնակարգելու խնդիրը:

Աշխատուժի միգրացիայի համաշխարհային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձացնել դրա հետևյալ առանձնահատկությունները.

1. Միգրացիոն հոսքերը հանգեցնում են ընդունող երկրում գործազրկության աճի, աշխատավարձերի իջեցման և կյանքի պայմանների վատթարացման, քանի որ միգրանտները պատրաստ են աշխատելու քիչ վարձատրությամբ⁹:

2. Աշխատուժի միգրացիան թույլ է տալիս ընդունող պետությանը առանց ծախսերի օգտվել որակյալ և էժան աշխատուժից: Օրինակ՝ վիճակագրական տվյալների համաձայն՝ մեկ մասնագետ պատրաստելը բուհերում արժե 100 000 դոլար¹⁰: Բնական է՝ մասնավորապես պայմաններում ավելի ձեռնտու է առանց համապատասխան ծախս կատարելու օգտվել այլ պետությունում կրթություն ստացած մասնագետի աշխատուժից:

3. Աշխատող միգրանտները երկփեղկված են. նրանց մի մասը կատարում է այն աշխատանքը, որը տեղացիները չեն ցանկանում կատարել, իսկ մյուս մասը դաս-

վում է «ուղեղների արտահոսք» կոչվող խմբին, որը կատարում է բարձր որակավորում պահանջող աշխատանք: Որոշ հետազոտողների կարծիքով, էմիգրանտները դատապարտված են երկրորդական շուկայի սերմացու լինելու, նրանց աշխատանքը ծանր է, վտանգավոր, ցածր վարձատրվող և անհեռանկարային: Այսպես, ամերիկացի հետազոտող Ա. Պորտենը գտնում է, որ միգրացված աշխատուժի «առաջնային մաս» կարելի է համարել նրանց, ովքեր դասվում են են «ուղեղների հոսք» խմբին: Նրանք համեմատաբար հեշտ են ձուլվում: Իսկ միգրանտների զգալի մասը երկրորդական տեղ է զբաղեցնում աշխատուժի շուկայում¹¹: «Ուղեղների հոսքի» իմստիտուտը կարևոր է ոչ միայն այն առումով, որ ընդունող պետությունը ծախսեր չի կատարում որակյալ մասնագետներ պատրաստելու համար, այլ նաև այն առումով, որ «միգրանտ ուղեղները» նույն աշխատանքը կատարող տեղացիների համեմատ ավելի քիչ վարձատրություն են պահանջում: Այսպես, Ե.Ֆ. Ավդոկուշինի կատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ԱՄՆ –ում մաթեմատիկոսների, համակարգչային ծրագրավորման մասնագետների պահանջարկի մոտ կեսը բավարարվում է էմիգրանտների հաշվին¹²:

4. Միգրանտների զբաղվածությունը որպես կանոն ոչ թե ունիվերսալ է, այլ լոկալ. յուրաքանչյուր երկիր նրանց զբաղվածությունը լուծում է նրան առանձին ոլորտերում օգտագործելով: Էմիգրանտները կազմում են Բելգիայի լեռնագործների 50 տոկոսը, Շվեյցարիայում՝ շինարար բանվորների 40 տոկոսը, Ֆրանսիայում նրանց 25 տոկոսը զբաղված է շինարարության մեջ¹³: Հայաստանում միգրանտների աշխատուժն առավելապես օգտագործվում է սպասարկման ոլորտում՝ ռեստորանային բիզնեսում, խաղատներում, գիշերային ակումբներում:

5. Աշխատուժի միգրացիան ընդունող երկրում գործազրկության մակարդակի աճի և աշխատավարձերի իջեցմանը զուգահեռ ինչ-որ առումով բարձրացնում է ընդ-

հանուր բնակչության կենսամակարդակը: Կ. Ջիմերմանի կարծիքով, էմիգրացիան նպաստում է աշխատանքի շուկայի ճկունությանը նույնիսկ գործազրկության բարձր մակարդակի դեպքում¹⁴: Աշխատուժի միգրացիան, Ջ. Սայմոնի կարծիքով դրական է ազդում համաշխարհային տնտեսության զարգացման վրա և նպաստում արտադրության գործոնների ավելի արդյունավետ օգտագործմանը անգամ այն դեպքերում, երբ միգրանտ աշխատողների քանակը հանգեցնում է միջին աշխատավարձի նվազմանը: Իր այս դիրքորոշումը հիմնավորելիս նա որպես օրինակ է բերում միգրանտ բժիշկներին, որոնց էժան աշխատուժի պատճառով իջնում է տեղացի բժիշկների վարձատրության չափը, սակայն որի արդյունքում էականորեն շահում է տեղացի բնակչությունը՝ ստանալով ավելի էժան բուժօգնություն¹⁵:

6. Միգրանտների հետ աշխատանքային հարաբերությունների ձևակերպման գործընթացը տարբերվում է քաղաքացիների հետ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգումից: Վ. Ա. և Ե. Վ. Վասիլևների կարծիքով, օտարերկրյա աշխատուժի օգտագործումը ձեռնտու է գործատուներին, քանի որ այս դեպքում նրանք խուսափում են մի շարք բարդություններից՝ կապված աշխատանքի ընդունելու և ազատելու, աշխատանքային պայմանները բարելավելու, աշխատանքային վեճերը լուծելու և աշխատանքային այլ հարաբերությունների հետ¹⁷: Իսրայելում պարտադիր չէ աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը. այն կարող է կնքվել ցանկացած այլ եղանակով և լինել վավեր՝ բացառությամբ միգրանտ աշխատողների հետ կնքվող աշխատանային պայմանագրերի, որոնց գրավոր ձևը չպահպանելու դեպքում պայմանագիրն անվավեր է համարվում¹⁸: Հայաստանի Հանրապետությունում միգրանտ աշխատողներին աշխատանքի ընդունելու համար «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ է աշխատանքի թույլտ-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

վություն, սակայն այս նորմը այս պահին չի գործում, քանի որ դրա կիրարկման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարությունը դեռևս որոշում չի ընդունել:

7. Միգրատները ավելի ջանասիրաբար են աշխատում, քան տեղի բնակչությունը. եվրոպայում միգրանտ աշխատողների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1960-ական թվականներին միգրանտերը այստեղ կատարում էին քիչ վարձատրվող և անպատվաբեր աշխատանքներ, իսկ արդեն 2006 թ. նրանք մեծ դեր են խաղում փոքր և միջին բիզնեսում՝ ստեղծելով ընտանեկան կազմակերպություններ, որոնք տեղականների համեմատ աշխատում են 2 և անգամ 3 ժամ ավելի¹⁹:

Աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում նաև միգրանտի քաղաքացիության երկրի տնտեսական, որոշ դեպքերում նաև քաղաքական իրավիճակի վրա: ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ միգրանտների կողմից իրենց ընտանիքներին ուղարկվող գումարները տարեկան կազմում են 100 միլիարդ դոլար²⁰: Միգրացիայի ազդեցությունը երկրի քաղաքականության վրա հատկապես ակնհայտ է հայկական սփյուռքի օրինակով: Օրինակ՝ հայկական սփյուռքի մասին արտահայտվելիս Ադրբեյջանի նախագահ Յ. Ալիևը նշել է. «Պետք է համախմբվեն նաև Ադրբեյջանից դուրս ապրող ադրբեյջանցիները՝ հանուն Ադրբեյջանի հանրապետության: Օրինակ՝ ինչքան համախմբված է հայկական սփյուռքը, և ինչպես է նա օգնում Հայաստանի Հանրապետությանը լուծելու իր տնտեսական և անգամ քաղաքական խնդիրները: Հայաստանի ազգային շահի տեսանկյունից դա հիանալի է, սակայն մենք էլ պետք է օրինակ վերցնենք և սովորենք նրանցից»²¹:

8. Այլ առանձնահատկություններ: Դ.Վ. Չերնյակևան ի հայտ է բերել Իսրայելի աշխատանքային իրավունքի զարգացման

միտումները, դրանց շարքին դասելով նաև աշխատավոր միգրանտների օրինականացման գործընթացը²²: Ա.Ն. Չաշինը խորհուրդ է տալիս միգրանտների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերում սահմանել աշխատավարձի ցածր չափ՝ ոչ թե միգրանտի իրավունքները ոտնահարելու, այլ ընդհակառակը՝ պաշտպանելու նպատակով, քանի որ բարձր աշխատավարձի դեպքում զբաղվածության հարցերով կազմակերպությունները կարող են նպատակահարմար չհամարել միգրանտի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ աշխատանքը կարող է առաջարկվել նաև ՌԴ քաղաքացիներին²³:

Ներկայացված առանձնահատկությունները համադրելով Հայաստանի Հանրապետությունում միգրանտ աշխատողների աշխատանքի առանձնահատկությունների հետ՝ կարող ենք եզրահանգել, որ Հայաստանում միգրանտ աշխատողների աշխատանքի իրավական կարգավորման բացակայության պայմաններում շատ հաճախ նրանց հետ առհասարակ չի կնքվում աշխատանքային պայմանագիր, ավելին՝ միգրանտների աշխատուժն օգտագործող գործատուները խուսափում են նրանց մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելուց:

Փաստորեն օտարերկրացիների զբաղվածությունը Հայաստանում նույնպես կրում է լոկալ բնույթ, և նրանք առավելապես կատարում են այնպիսի աշխատանք, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կամ չեն կարող կատարել, կամ չեն ցանկանում. օրինակ՝ չինական ռեստորանային ցանցում խոհարարները չինացիներ են, և գործնականում այդ աշխատանքը չի կարող կատարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից: Այս առումով, կարծում ենք, աշխատող միգրանտների քանակի ավելացումը Հայաստանի Հանրապետությունում չի կարող էական ազդեցություն թողնել Հայաստանի Հանրապետությունում գոր-

ծագրկության մակարդակի վրա:

Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը չի կարող դասվել միգրանտների գրավող երկրների շարքում, սակայն թե՛ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և թե՛ օտարերկրացիների աշխատանքային իրավունքների ու ազատությունների պետական երաշխիքները ՀՀ աշխատանքային օրենսգրքի նպատակ համարելու օրենսդրի մոտեցումը, կարծում ենք, արդեն իսկ խոսում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է միգրանտների աշխատանքի կազմակերպման հարցերի իրավական կարգավորման խնդիրը, թեև այս պահին Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի հիմնական առանձնահատկությունը իրավական կարգավորման լիարժեք բացակայությունն է: Ավելին՝ աշխատանքային միգրացիան անգամ չի գրավել պետական լիազոր մարմինների ուշադրությունը՝ թեկուզ միայն վիճակագրական տեղեկատվություն ձևավորելու տեսանկյունից:

Վերջապես, աշխատանքային միգրանտների՝ օտարերկրացիների հետ հարաբերությունների հազվադեպ հանդիպող առանձնահատկություններից է այն, որ

նրանց համար գործատուն չի վճարում սոցիալական ապահովագրության վճարներ, և արդյունքում նրանք զրկվում են ժամանակավոր անաշխատունակության դեպքերում նպաստ ստանալու իրավունքից, և անլուծելի խնդիր է նրանց աշխատանքային ստաժ կուտակելու հարցը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները հիմնականում բնորոշ են նաև Հայաստանի Հանրապետությանը, սակայն հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրանտների քանակի սակավությունը, ինչպես նաև աշխատանքային միգրացիայի իրավական կարգավորման բացակայությունը՝ Հայաստանում այս առանձնահատկություններից ոչ բոլորն են լիարժեք կիրառելի (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության դեպքում աշխատանքային միգրացիան չի ազդում գործազրկության աճի վրա), իսկ որոշ առանձնահատկություններ առհասարակ չեն գործում (օրինակ՝ օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու գործընթացը չի տարբերվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին աշխատանքի ընդունելու կարգից):

¹ St'u Костин Л. Миграция и мигранты// Человек и труд. 2001. N 8, էջ 61:

² Սկսած անցյալ դարի 60-ական թթ.՝ Եվրամիության բնակչության ծնելիության գործակիցը կրկնակի նվազել է: Ըստ որոշ կանխատեսումների՝ առաջիկա 50 տարիների ընթացքում այն կկազմի աշխարհի բնակչության 9 տոկոսը, այժմյան 13-ի փոխարեն/ Revue d economie politique. 2001.N4, էջ 59:

³ St'u Никольская Г.К. Иммигранты на рынке труда развитых стран // Трудовое право, И 4/ 2002, էջ 75:

⁴ St'u Никольская Г.К., նույն տեղը:

⁵ St'u E. Ravenstein. The Laws of Migration;

Journal of the Royal Society, June 1885, էջեր 167-227:

⁶ St'u Г. Сванидзе, Д. Сванидзе. Эмиграция из Грузии и ее причины. /Миграции на Кавказе.Материалы конференции. / Ред. А.Искандарян.- Ер.:КИСМИ, 2003. էջ 129:

⁷ St'u Хабриева Т.Я. Миграционное право России: теория и практика.-М.: Юридическая фирма КОНТРАКТ, 2008. 336с, էջ 114:

⁸ Աղյուսակի տվյալները վերցրել ենք միգրացիոն գործակալության պաշտոնական կայքից՝ [http://backtoarmenia.am/?hcat=85&scat=88:](http://backtoarmenia.am/?hcat=85&scat=88)

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- ⁹ Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա. Миграция населения./ Трудовое право, И 7/ 2006, էջ 13:
- ¹⁰ Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա, նույն տեղը, էջ 12:
- ¹¹ Տե՛ս Portes A., Min Zhou: Should Immigrants Assimilate?; Public Interest, Summer 1994, էջ 13:
- ¹² Տե՛ս Авдокушин Е. Ф. Международные экономические отношения. Четвертое издание. М., 1999. էջ 142:
- ¹³ Տե՛ս Киреев А. Международная экономика. Часть 1, Москва., 1997, էջ 322:
- ¹⁴ Տե՛ս Revue d economie politique. 2001, N4, էջ 581:
- ¹⁵ Տե՛ս Simon J. The Economic Determinats of Migration, D.C.: Brookings Institution, 1989, էջ 84-95:
- ¹⁶ Տե՛ս В.А. Васильев, Е.В. Васильева. Трудовые правоотношения с иностранными гражданами. / Трудовое право, И 7/ 2006, էջ 38:
- ¹⁷ Տե՛ս Д.В. Черняева. Трудовое право Израиля. Трудовое право, И 7/ 2006, էջ 72:
- ¹⁸ Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա., նշվ. աշխ., էջ 13:
- ¹⁹ Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա., նշվ. աշխ., էջ 12:
- ²⁰ Տե՛ս Азербайджан-родина всех азербайджанцев. Речь Президента Азербайджанской республики Гейдара Алиева на Учредительном собрании Всероссийского конгресса азербайджанцев. Баку, 2000, с 104-110, 134:
- ²¹ Տե՛ս Д.В. Черняева. Трудовое право Израиля./ Трудовое право, И 7/ 2006, էջ 70:
- ²² Տե՛ս А.Н. Чашин. Юридическое сопровождение адвокатом процесса привлечения иностранной рабочей силы./ Трудовое право, И 8/ 2006, էջ 26:

LABOR MIGRATION AS A MAIN TYPE OF MIGRATION AND ITS SPECIFICATIONS

Mane KARAPETYAN

*Department of civil law
3-rd year aspirant*

Within the framework of Article the migration studied as a historical phenomenon and its cause of the main factors.

More detailed the author referred to the labor migration, considering it as the main type of migration.

In the Article were brought examples that the employers of Republic of Armenia receive migrant workers to work, as well as the number of foreigners every year increase in stats statistics.

The author singled out the following features of labor migration.

1. Migration flows lead to increase of unemployment in the host country, reduction in salaries and deteriorating living conditions, since the migrants were ready to work in small salaries.

2. Labor migration allows the receiving state without the use of high-quality execution costs and cheap labor.

3. Working migrants split by some of them perform the work that citizens do not want to make, and the other part is viewed as a "brain drain" by making work that requires a high degree.

4. Employment of migrants as a rule is not universal but local, in each country, their

employment is mostly used to separate fields.

5. Labor migration in the host country growth and unemployment reduction of salaries along with some increases in terms of total population living standards.

6. Migrants working relationship with the formulation process is different from working relationship with the citizens of settlement:

7. Migrants are working more diligently than the local population.

Comparing the features mentioned in the Republic of Armenia characteristics of migrant workers, the author came to the conclusion that migrant workers work in the absence of a legal settlement with them very often in general not signed employment contract.

Actual employment of foreigners in Armenia also carries the local character and they mostly carry out such work, which is the Republic of Armenia to the citizens can not or do not want to make.

Within the framework of Article the author also speaks about the question migrant labor organizing the Republic of Armenia on the number of international agreement ratified is growing, so the Republic of Armenia attaches great importance to the organization of migrant labor issues, legal settlement, though this is still relevant international treaties ensuring the application of sub-legislative acts were not accepted.
